Թ. ՏԱՐԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ 16 ՕԳՈՍՏՈՍ 1906 ԹԻՒ 838

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ. վեցամսեայ 1.50 «

Թանգուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է։ Հրեիին ա եղի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

—o—

Վառնայի համար ձեռ մի 10 սանթիմ է

Դամակ եւ դրամ դրկել խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ", Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռ մի 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռ մի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք չեն չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

## «ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բը բոշիւրը յանձնված է տպագրութեան։

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց։ Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող գոկիմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր։

Դիմել «Շարժումի» Խմբագրութեան

## Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժոզէֆ քարափին վրայ։ Կըստանայ զանազան հայերէն թերթեր։ Սա հասարակ բոլոր հայ կամարեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն։ Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները։

## ԵՐԿՐԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Անդրանիկի առթիւ խօսած յօդուածում համոզում էի յայտնել թէ՝ Անդրանիկը անշուշտ կազմակերպութեան սիստէմը դատապարտողը պէտք է լինի ընդհանուր ժողովում։ Այսօր ուզում եմ պարզել որ ոչ միայն Անդրանիկը, այլ և երկրի բոլոր այն գործիչները, որոնք ժողովրդի դատին նուիրված են բոլորովին անձնական ոևէ շահ չը սպասելով, այլ ընդհակառակը կորցնելով, պէտք է դատապարտեն դաշնակցական սիստէմը, որովհետեւ Դաշնակցութիւնը երբէք չէ կարողացել երկրի գործիչներին գոհացուցանել ոչ միայն պատերազմական կարիքներ մատակարարելու տեսակէտից, այլ եւ անձնական նիւթական ապահովութեան։

Վանի առաջին դաշնակցական գործիչ Պետո երկար տարիների ընթացքում Վան մնալով՝ Դաշնակցութիւնից չէ կարողացել ստանալ այնքան գումար, որքան մի սուտ չէֆ իր երեք ամիս բանտարկութեան միջոցին ծախսել է։ Մինչդեռ Դաշնակցութիւնը Պետոյի մահից յետոյ՝ այսօր նրա անունով է երգուում, նրա պատկերները ծախելով ի շահ կազմակերպութեան վաճառականութիւն է անում։ Պետոյից յետոյ գալիս է Վանա գործիչ Վ.Ը, այդ խեղճ մը. զան մի քանի բուբլի իր գործունէութեան ընթացքում հազիւ կարողացաւ ստանալ, մինչդեռ Դաշնակցութիւնը արտասահմանում հազարներ էր վատնում։ Երկրի միւս մասերը արդէն գործիչներ չեն ունեցել որ փող ծախսեն, եղողներն էլ չեն ստացել... մինչդեռ Եւրոպայում և Կովկասում տասնեակ հազարներ են ծախսվել։ Եղած գործիչները անօթի են մնացել, երկրին զէնք չէ մատակարարվել ... մի անհերքելի ճշմարտութիւն է որ Դաշնակցութիւնը մինչեւ օրս երկու հազար հրացան էլ չէ կարողացել մտցնել երկիր, հապա ո՞ւր է գնացել Դաշնակցութեան ձեռք բերած գումարները՝ մեծ մասամբ ճամբորդութիւնների, շատը անոգուտ, և արտասահմանեան գործունէութեան, այսինքն հրատարակութիւնների, պրոպագանդիստների, եւ այլն ոչ իրական յեղափոխական գործունէութեան։ Ոչ իրական ենք ասում, որովհետեւ յեղափոխութիւնը արտասահմանում չէ որ պէտք է աճի ու զարգանայ, այլ երկրում. Կովկասի և արտասահմանեան գործունէութեան նպատակը պէտք է լինի երկրին օժանդակելը. և եթէ երկիրը կովկասեան հարիւր հազարաւոր բուբլիներից շատ չնչին. արհամարելի քանակութիւն է ստանում, ինչպէս և Ամերիկայի տալարներից ու բալկանների և Եգիպտոսի ֆբրանքներից, այդ հաստատում է որ այդ երկիրների հայ ժողովուրդը շահագործվում է երկրի գործունէութեան անունով, առանց երկրին հնարաւոր օգնութիւնը տալու։ Իրաւունքը այս է։ Երկրի անունով, զէնքի անունով, կուսակցների անունով հաւաքվում են գումարներ, սակայն ոչ երկրի ժանգների մէջ տառապող պրոպագանդիստն է ապահով, ոչ կուսակցն է զէնք ստանում, ոչ ապստամբող վայրը պէտք եղած օգնութիւնը։ Ինչո՞ւ, որովհետեւ Դաշնակցութիւնը զուտ, անխառն յեղափոխական կուսակցութիւն չէ. կազմակերպութիւնը չեն վարում գործի մարդիկը, այլ սիրողները, իրենց գոյութիւնը յեղափոխական ասպարէզում արդարացնելու համար արտասահմանում սուտ գործունէութիւն ստեղծողները։

Այս անօրմալ վիճակը ստեղծում է մի ուրիշ անօրմալ ու շատ վտանգաւոր դրութիւն։ ամբողջ երկրում՝ կազմակերպիչ ուժերի և նիւթականի պակասութեան պատճառով՝ կազմակերպութեան պատկանող անդամների թիւը հազիւ 1500ի է հասնում. մինչդեռ արտասահմանը ունի հազարաւոր անդամներ,— նուիրատուներ, որոնք իրաւունք ունեն պատգամաւորներ ընտրել ընդհանուր ժողովում յեղափոխական ճակատագրական խնդիրների մասին վճիռներ տալու... այնպէս որ յեղափոխական ակտերը սանկցիա են ստանում ոչ թէ երկրի զուտ յեղափոխական տարրից՝ այլ Կովկասն, պոլքաների, Ամերիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի նուիրատու անդամների ներկայացուցիչներից։

Կայ մի երրորդ վտանգաւոր հետեւանքը. մի քանի անհատներ, որոնք երկրի գործիչներ են համարվում, լաւ ծանօթ լինելով ոևէ վայրի պայմաններին, երբեմն զուիցերիացիների պէս գրամով ծառայութեան են մտնում կազմակերպութեան մէջ. դրանք տեսնելով որ կազմակերպութիւնը կազմված է գրեթէ սիրողներից, ու սահմանը անցնելը այդչափ հերոսութիւն է համարվում, մեծ ռոճիկների յոյսով բացարձակ վարձվում են, ու դրանց այնքան վտանգ է սպառնում, որչափ Պոլսոյ, կամ Զմիւռնիոյ, կամ ոևէ ծովափնեա քաղաքի մի մաքսանենգի... ու հետզհետէ փչանում են այդ տիպերը ապստամբեան գործը նրանց համար դառնում է սոսկ իբր լաւ ապրուստ ճարելու միջոց. այնքան վտանգներով, որչափ կարող է իր մէջ պարունակել մաքսանենգութիւնը և պարզ աւազակութիւնը... որովհետեւ այդ գործունէութիւնը նրանց մի համում տալիս է այնքան միջոց որքան այդ տիպերը իբրեւ սովորական քաղաքացիներ մի տարում չէին կարող աշխատելով ձեռք բերել...

Ու այս բոլորը անկարելի է որ անկատելի մնացած լինեն Անդրանիկից և երկրի այն գործիչներից, որոնք հայ յեղափոխութիւնը ոչ թէ ապրելու աբեւոտ են դարձրել, այլ միջոց հայի վիճակը բարելաւելու։

Վերջին ընդհանուր ժողովում Ոսկեհանքի ընկերները պահանջում էին մի փոքրիկ գումար. մի քանի հարիւր ֆրանք, որպէսզի իրենց մի կարեւոր ընրոյ համար խանութ բացվի թէ նրա յեղափոխական գործունէութիւնը սքողելու և թէ ապահով տեղ ունենալու համար։ Այդ պահանջը բարկութեան չանթերի արժանացաւ, որ ձրիակերութիւն է ստեղծվում։ Մինչդեռ

վերջերս Պոլիս ժանողները թէ Պոլսում և թէ Եւրոպայում իսկ իրենց յեղափոխական լինելը թագցնելու համար հաղար ու մի տեսակ շռայլութիւնների են դիմած. որոնց ոչ ոք չէ դիմել մինչեւ օրս. Սոֆիայում Քրիստափորի ընկերակցող կինները տրամադրութիւն ունեցել դաշնակ ունենալ, ձի ունենալ նստելու համար, իսկ զգեստների այնքան պաշար են ունեցել որ ամէն մի գրանդ դամ կը ցանկար այդպիսի յեղափոխականուհի լինել...

Ուրեմն երկրի գործիչներին անկարելի է յեղափոխական լինելը սրողելու համար մի փոքրիկ խանութ բանալ, որը եթէ շահը բերէր կրկին կազմակերպութիւնը կօգուտէր, իսկ Սոֆիայում կարելի է օրական հարիւր ֆրանկ ծախսել... Հաւատացէք որ Քրիստափորին ընկերացող այդ կինները, գործին առանց ոևէ օգուտ տալու, մի քանի ամսվան մէջ աւելի շատ դրամ են ծախսել յեղափոխական կասսայից քան մեր բոլոր արդէն զոհված և Դաշնակցութեան փառք ու պատիւ կազմող ընկերները—Պետոներ, Բաղկէններ, իրենց փայլուն սիրողջ շարքովը...

Այդ երկու զբօսաշրջիկ տիկին թէ օրիորդները իբր թէ գործի մտած օրերում, Դրօշակի սիրող յեղափոխականները մի ճրագառան յօգուած էին նիրհել այդ խեղճերին. յայտարարելով որ հայ ազգը այժմ երջանիկ է որ կիներն էլ են մասնակցում. այդ սիրող խմբագիրները մեր յեղափոխութեան պատմութիւնը այդ ձեւով են գրում. 96 թուականին բազմաթիւ օրիորդներ և կիներ կային Պոլսոյ կազմակերպութեան մէջ, նրանք կատարեցին շատ վտանգաւոր գործեր, զէնքերի պահպանման և տեղափոխման խնդրի մէջ, նրանց մէջ գտնվեց և մի օրիորդ իր ամբողջ կարողութիւնը. տուներ տեղը կորցրեց, ու այսօր անօթի է. չարչարված է, ասկայն Դրօշակը այդ միջոցին պէտքը չզգաց տաճկահայ կիներին մի ոգեւորիչ յօդուած գոնէ նուիրել.. որովհետեւ նրանք Քրիստափորի հետ չէին գնացել... բայց որոնք նախակարապետներն էին հայ յեղափոխական կանոնց։ Այո... շատ բան լսքէութեան վրա է հիմնված. /սկ լսքէութիւնը Դաշնակցութեան մէջ ամենամեծ և յարգի բարեմասնութիւնն է.

. . . . . .

. . . . . .

. . . . . .

92ից մինչեւ 96ը Պոլսում գործում էր Վահանեան. իբր թէ Կովկասում մեծ ժողովրդականութիւն վայելող Քրիստափորը ապրելու փող անգամ չէր կարող հասցնել այդ գործիչին և ղըժգոհ էր նրանից իբր ոչինչ չանողից. Վահանեանը պատռված կօշիկներով մանէր գալիս Պոլսոյ փողոցներում, նրա անօգնական քոյրը Տփղիսում անօթի էր. բայց այդ ոչինչ չանող Վահանեանը Պոլսում ստեղծել էր մի ահագին զինուորական ու դրամական ուժ... իմ հայրս ծերացած և հիւանդ, ես ամբողջովին գործին նուիրված, ալա Վռամեան թոյլ չը տալով ինձ յեղափոխական կասսայից ժահաժերձ հօրս դրամ ուղարկել, դիմում եմ կասեան խնբապիրների մէջին, մի կերպ օգնել հօրս. բայց նա արդէն հօրս մահն է գուժում... Մինչդեռ Քրիստափորը եթէ բանտարկվում էր նրա կինը եւ երեխան ամսական հարիւրներ էին ծախսում և այսօր այդ կինը և երեխան անշուշտ ապահովված են, թէև հայ ցեղը նրանցից ոչ մի օգուտ չը պէտք է ունենայ, որովհետեւ կինը հայերին ատող մի ռուս է, անշուշտ իր զաւակն էլ հայերից հեռու պէտք է պահէ...

Այս ամէնը պէտք է գիտնան երկրի գործիչները, պէտք է գործը խլեն սիրողների ձեռքից. պէտք է դրամով օժանդակողներին զրկեն վճռողական դեր ունենալու իրաւունքից յեղափոխական որոշումների վերաբերմամբ. եթէ նրանք իսկապէս հայրենիքին են ծառայում...

ՎԱՐԴՕ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒԵՐ

*Սոֆիա, 13 օգոստ. 1906*

*Դաշնակցական եղբայրասպանութեան շարունակութեան մասին*

—○—

Ահա տարին կը լրանայ այն առաջին դէպքից (եղբայրասպանութիւնից) երբ դաշնակցական չէֆերի հրահանգով եւ նրանց կուսակցամոլ ու անհեռատես գինուորների ձեռքով սպանուեցաւ Զարգանդը Թիֆլիսում.

Այդ յայտնի ոճրագործութիւնը երբ հայ մամուլում առարկայ եղաւ փաստացի կերպով հաստատուեցաւ թէ Դաշնակցութիւնը որոշել է եղբայրասպանութեան դիմել որպէսզի ժողովուրդին այքին երեւայ մի հզօր կուսակցութիւն. եւ հանգամանքից օգուտ քաղելով իրենց շահատակութեան չրջանը աւելի յայնցնեն ու այդպիսով կարենան իրենց թոյլ վիճակը վերանորոգել: Մի քանի գործիչ—հացկատակներ արտասահման անցնելով ու մի թերթ հրատարակելով ինքզինքին կը կարծէին այն պէս ինչպէս Ռուսաց Նիքոլա ձար!!!. բայց տեսնենք.

Մենք կը կարծէինք թէ առաջի դէպքին, մամուլի լուրջ քննադատութիւնը դաշնակցական չէֆերի! իրենց շար միտումից ետ պիտի կեցնէր, ու եղբայրասպանութիւնը վերջ պիտի գտնէր. Այդ եկաւ հաստատեց նաեւ նոյն ժամանակայ «Դրօշակի» մէջի պաշտօնական ազգը.

Մենք ուրախ էինք որ հէնց առաջին դէպքին երկու կուսակցութիւններ յարաբերութեան մտան եղբայրասպանութեան վերջ դնելու նպատակաւ. եւ խոստացուեցաւ չի կրկնել. խոստումը խոստում մնաց. եւ վրայ հասաւ երկրորդ, երրորդ եղբայրասպանութիւնները. դարձեալ դաշնակցականների կողմից ընդդէմ հնչակեանների. յուզումը մեծ է ձեռք ձեռքի տանք.

Մարդավազովը ձեռքը մեկնեց ու բռնեց Մանիայի ձեռքը. զգաց որ Մանիան ամբողջ մարմնով դողաց. ինքն էլ դողաց եւ երկուսի ձեռքերը կարծես սկսեցին այրվել.

Կրկին անխօս գրեթէ, այդպէս երկուսով այրվելով, ճամբան շարունակեցին հասան պարտէզը, իջան ձորը եւ գնացին ծառերի հովանիի տակ մի նստարանի վրա տեղաւորվեցին. երկուսն էլ լուռ էին... Ցանկարծ Մանիան տեղիցը վեր ցատկեց եւ ցցվելով Մարդավազովի առջեւը կտրուկ ձայնով ասաց.

—Այսպէս անկարելի է. տանջանք է սա. ինքզինքը խաբել ես սիրում եմ ձեզ. տեսնում եմ որ դուք էլ ինձ էք սիրում, բայց ամուսնացած լինելուս պատճառով չէք յանդգնում խոստովանել... Ասացէք, եթէ ճիշդ

վերջերս Պոլիս ժանողները թէ Պոլսում և թէ Եւրոպայում իսկ իրենց յեղափոխական լինելը թագցնելու համար հաղար ու մի տեսակ շռայլութիւնների են դիմած. որոնց ոչ ոք չէ դիմել մինչեւ օրս. Սոֆիայում Քրիստափորի ընկերակցող կինները տրամադրութիւն ունեցել դաշնակ ունենալ, ձի ունենալ նստելու համար, իսկ զգեստների այնքան պաշար են ունեցել որ ամէն մի գրանդ դամ կը ցանկար այդպիսի յեղափոխականուհի լինել...

Ուրեմն երկրի գործիչներին անկարելի է յեղափոխական լինելը սրողելու համար մի փոքրիկ խանութ բանալ, որը եթէ շահը բերէր կրկին կազմակերպութիւնը կօգուտէր, իսկ Սոֆիայում կարելի է օրական հարիւր ֆրանկ ծախսել... Հաւատացէք որ Քրիստափորին ընկերացող այդ կինները, գործին առանց ոևէ օգուտ տալու, մի քանի ամսվան մէջ աւելի շատ դրամ են ծախսել յեղափոխական կասսայից քան մեր բոլոր արդէն զոհված և Դաշնակցութեան փառք ու պատիւ կազմող ընկերները—Պետոներ, Բաղկէններ, իրենց փայլուն սիրողջ շարքովը...

Այդ երկու զբօսաշրջիկ տիկին թէ օրիորդները իբր թէ գործի մտած օրերում, Դրօշակի սիրող յեղափոխականները մի ճրագառան յօգուած էին նիրհել այդ խեղճերին. յայտարարելով որ հայ ազգը այժմ երջանիկ է որ կիներն էլ են մասնակցում. այդ սիրող խմբագիրները մեր յեղափոխութեան պատմութիւնը այդ ձեւով են գրում. 96 թուականին բազմաթիւ օրիորդներ և կիներ կային Պոլսոյ կազմակերպութեան մէջ, նրանք կատարեցին շատ վտանգաւոր գործեր, զէնքերի պահպանման և տեղափոխման խնդրի մէջ, նրանց մէջ գտնվեց և մի օրիորդ իր ամբողջ կարողութիւնը. տուներ տեղը կորցրեց, ու այսօր անօթի է.

## ՄԱՆԻԱ

2

(Վէպ Հայ Յեղափոխ. կեանքից)

Մանիայի եւ Մարդավազովի իրար հանդիպումից անցել էր երեք ամիս. Մանիայի ամուսինն էլ էր եկել եւ նրանք ի հարկէ ապրում էին միասին, բայց Մարդավազովը էլ նրանց տանից պակաս չէր լինում։

Մայիսի գեղեցիկ օրերից մին էր առաւօտեան ժամի 11ը. Մարդավազովը բարձրանում էր դէպի Դաւիթի ստրը, որի ստորոտում մի շատ համեստ տնակի մէջ տեղաւորված էին մի կերպ Մանիա եւ իր ամուսին Դօլկոպօլովը. Տիկին Մանիան, որի տիկին լինելու մէջ էլ կասկած չը կար. քանի որ իր ամուսնու հետ էր ապրում. կանգնած էր պատուհանի առջեւ եւ բորբոք աչքերով դիտում էր դէպի իրենց տուն բարձրացող Մարդավազովին. վերջապէս վերջինը հասաւ եւ մօտեցաւ պատուհանին ու ողջունեց. սեղմելով Մանիայի մի քիչ դողացող եւ պաղ ձեռքը։

—Զարմանալի. բան Մարկոս Ֆիլիպիչ. (Մարդավազովի անունը եւ իր հոր անունը, ռուսները իրարու դիմում են այդ ձեւով) կարծես սիրաս գուշակեց կէս ժամ է որ կանգնած եմ պատուհանի առջեւ եւ առաջին որ ոտքիս մօտեցայ այն որոշումով որ անպատճառ պէտք է գաք. լներս ելէք, դեռ թէյ կայ։

—Ոչ. աւելի լաւ է. բարձրանանք լեռը. եթէ ուզում էք գնանք բուսաբանական պարտէզը. այժմ այնտեղ հրաշալի է...

—Հատ լաւ, գնանք.՝ պատասխանեց Մանիան եւ հեռանալով պատուհանից մի քանի վայրկեանից յարդէ գլխարկը գլուխը դրած դուրս եկաւ։ Նրանք կամաց կամաց ուղղվեցին դէպի պարտէզը... ճանապարհին շատ քիչ նին խօսում. Մանիայի կուրծքը արագաբար բարձրացած էր անում. թերեւս լեռան վրա դժուար քալելու պատճառով... այսերը կարմրել էին, կանանչագոյն աչքերը կարծես պէծին էին տալիս...

—Լաւ չէ՞, այս տեղ, լեռան վրա, ինչ մաքուր օդ է. բայց ես դժուար եմ շնչում..

—Կուզէք մի քիչ այստեղ նստինք.

—Ոչ, ոչ, կարծես վախցած առարկեց Մանիան, գնանք, աւելի լաւ է այսպէս. միայն եթէ կարելի է ձեռք ձեռքի տանք։

Մարդավազովը ձեռքը մեկնեց ու բռնեց Մանիայի ձեռքը. զգաց որ Մանիան ամբողջ մարմնով դողաց. ինքն էլ դողաց եւ երկուսի ձեռքերը կարծես սկսեցին այրվել։

Կրկին անխօս գրեթէ, այդպէս երկուսով այրվելով, ճամբան շարունակեցին հասան պարտէզը, իջան ձորը եւ գնացին ծառերի հովանիի տակ մի նստարանի վրա տեղաւորվեցին. երկուսն էլ լուռ էին... Ցանկարծ Մանիան տեղիցը վեր ցատկեց եւ ցցվելով Մարդավազովի առջեւը կտրուկ ձայնով ասաց.

—Այսպէս անկարելի է. տանջանք է սա. ինքզինքը խաբել ես սիրում եմ ձեզ. տեսնում եմ որ դուք էլ ինձ էք սիրում, բայց ամուսնացած լինելուս պատճառով չէք յանդգնում խոստովանել... Ասացէք, եթէ ճիշդ

պոռթկաց դաշնակցական զէնքը իր մահացու հարուածը տալով հէնց իր հարազատ եղբօր՝ հնչակեանի կուրծքին ու գետին փռեց անմեղ զիակներ, զիակներ որոնք պէտք էր թշնամիի ձեռքով թշնամիի զէնքով թշնամիի կապարով իյնար. կրկնութիւնը շարունակուեցաւ եւ եղբայրասպան պրոպականդան արձագանք գտաւ ամեն տեղ. այդպիսով մի տեղ ինկաւ Մհերը միւս տեղ Դաշոյնը եւ ահա այսօր էլ կը լսենք որ ընկեր են, Գօրիսում—չորս հոգի մեռած եւ երեք վիրաւոր. Նորէն դաւաճան եղբօր դաշնակցականի ձեռքով. այդտեղ դաշնակցական արի զինուորը ձեռքը առանց խղճին վրայ դը նելու իր մահացու հարուածը տուաւ հնչակեանին. դաշնակցական զինուորը չի ուննցաւ զէթ այն գիտակցութիւնը թէ երբ նա ինքն իր կրծքին վրայ կրէ վէրք մը անոր վրայ դեղ դնող ու կապողը պիտի ըլլայ իր զինակից եղբայրը մէկ խօսքով իրեն պիտի ըլայ վերջին գաւաթ մը սառ ցուր աւողը հնչակեան.

Այս բոլոր դաւաճանութեան առջեւ լուռ մնացին շատ թէ քիչ գիտակից դաշնակցականները դուրս չեկան իրենց թագստոցից ու չի բողոքեցին իրենց չէֆերի դէմ։ Իսկան հնչակեանները. եւ անոնց կորստեանը ուրախացաւ թշնամի բանակը ուրախացան նոեւ դաշնակցական եղբօր արեան կարօտ չէֆերը, ողբաց ու տուժեց հնչակեանութիւնը գիտակից դաշնակցականը ու ժողովուրդը։

Դաշնակցական գիտակից ու անկեղծ զինուորնե՛ր բաւա՛ն է համբերէք, բաւական է ձեզ չահագործեն, ուշքի եկէք ձեր չէֆերը ձեզ կը դրդեն եղբայրասպանութեան. դուք եղբայրասպան կըլլաք. ձեր սուրբ ձեռքերը եղբօր սրբէնին մէջ է որ կը թաթխէք. ուշքի եկէք, ձեր մէջէն վտարեցէք հացկատակներ, դաւաճաններ, դուք, դուք անցէք ձեր գործին գլուխը. եւ ձեռք ձեռքի տուէք հնչակեան զինուորներին հետ եւ դուք, դուք զինուորներ էք որ երբ թշնամու բանակին դէմ ելլէք իրարու քաջալեր պիտի հանդիսանաք դուք հայու զինուորներ էք ձեր գընդակը մի խրէք իրարու կուրծք պահեցէք ձեր գնդակը ձեր դարաւոր թշնամուն որուն տապալումով է որ դուք պիտի կատարէք ձեր պարտականութիւնը եւ հայ ժողովրդին ազատելով սարկութիւնից պիտի տաք նրան ազատ կեանք. ամենից առաջ պէտք է դո՛ւրս վտարել եղբայրասպանները. եւ ձեռք ձեռքի տալ. ահա այն ժամանակ է որ մենք պիտի դոչենք.—«Անկցին եղբայրասպանները ու դաւաճանները. կեցցէն հայ յեղ. գիտակից զինուորները որոնք համերաշխութեան սիւներն են եղած.» ահա այս է որ մենք կըսպասենք գիտակից ու անկեղծ դաշնակցականներէն ուրիշ ոչինչ։

Ժագ

Յ. Գ.—Մեր բոլոր գրութեան մէջ բացառութիւն կը կազմեն բոլոր այն դաշնակցականները որոնք եղբայրասպանութեան հակառակ են եւ համերաշխութիւն ցանկացողներ։

Նոյն

---

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԲՐՕՆԻԿ

Եւրոպայից մեզ հաղորդում են որ այս տարի էլ Դաշնակցութիւնը ուզեցել է առկախ մնացած խնդիրներին վերջ տալ Դաշնակցական խորհուրդ կոչված մարմնի ժողովով, սակայն դաշնակցական հեղիրակաւոր գործիչներ մերժել են այդ անկանոն խորհրդին մասնակցել և պահանջել են ընդհանուր ժողով։ Ընդհանուր ժողով պահանջել են նաև մի քանի կեդրոնական կոմիտէներ և այդ պահանջների վրա է որ Դաշնակցութեան կարծեցեալ վարիչները ստիպվել են ընդհանուր ժողովը գումարել։

Պալքանեան ողորմելի շրջանական ժողովը իր կողմից ինձ համար որոշում է տալ և առաջարկում է ընդհանուր ժողովին որ այդ որոշումը հաստատվի... Այդ որոշումը ինարկէ իմ ծիծաղն է շարժում, ինչպէս շարժել են այդ տեսակ որոշումները միշտ և այժմ շատ գոհ եմ որ հացկատակ և հայ յեղափոխութեան համար եղունկ և ոչ սանտիմ զոհող մասնաւոր վարժարանի վարիչ Պ..... իբրեւ պատգամաւոր պէտք է գտնվի Դաշնակցութեան ընդհանուր ժողովում և ես հնարը պէտք է ունենամ դրս օձիքիցը այնտեղ բռնելու.... Այստեղ աւելորդ չեմ համարում, ոտացածս տեղեկութիւնների համաձայն աւելցնել և այն—որ վարժուհին բոլորովին յանցանք չունի որ այդ խպլիկը իբրեւ պատգամաւոր պէտք է ներկայանայ... ի ծագելին այն է որ յեղափոխութեան մի սանդիմի ծառայութիւն չը մատուցած, տարիներով յեղափոխութեան անունով իր գոյութիւնը քարշ տուող. երբեմնի Կովկասցիներին ատող Պիս...ը 99 թւականին գիւղաւունքին աշխատակցել ձգտող. Դաշնակցութեան դէմ մորտնչելու համար բանակցող այդ պարոնը պէտք է ինձ համար դատաւոր ներկայանայ։ Բարի տեսութիւն.... Եթէ իմ յեղափոխական գործունէութեան դատաւորները լինելու են Պի.....ների պէս անպիսման ստրուկները.. հայ յեղափոխականների մէջ ինձնից երիտանիկ մարդ չը կայ.. դրանց նմանների ներկայութիւնը մարդ գործումի գործը աւելի կը փութացնէ. որովհետեւ Պուլկարիա եկող իրական ոչ մի գործիչ կայ որ այդ ստրուկ տիպի հոգին հասկացած չը լինի....

Ամերիկայից աշճի Վահագը, բալկաններից ստրուկ, ռուբլիի համար հոգի տուող Պիոնը..... հրաշալի պատկեր..... իսկապէս որ Դաշնակցութիւնը վիրաբուժական ծանր օպերասիոնի պէտք է ունեցել. և այդ օպերասիոնը պէտք է լինի.... զանազան Պիոնեաններ ու Վահագներ.. և այլն այդտեսակ ռուսահայ ու տաճկահայ տիպեր պէտք է հեռացվեն դաշնակցական յեղափոխական մարմնից, եթէ իրօր Դաշնակցութիւնը յեղափոխակա՛ն մարմին է..

ՎԱՐՈ

---

## ՄՀԵՐ ՍԱՆՈՒԿԵԱՆ

Մհերը Մուշի Ցրոնք գիւղից էր՝ բազմանդամ եւ հարուստ ընտանիքի զաւակ, ծնած 1878.ին։ Նրանց տունը յայտնի է եղել Ցրոնքում իր հիւրասիրութեամբ եւ հեղինակութեամբ։ Ինչ օտարական եւ դրսեցի որ մտնէր Ցրոնքում կը հիւրասիրուէր Մհերենց տանը.

Երկիր մտնող պրոպագանդիստների յեղափոխական քարոզութիւնները առանձին տպաւորութիւն են թողնում պատանի Մհերի վրայ. որ գիշեր ցերեկ մտածում է մտնել զէնքի եւ կռուել օսմանեան բռնութեան դէմ. Շուտով նա թողնում է հանգիստ ապրուստը եւ ընկերանում Ալի—Զրոնանցի անմոռաց Լեւոնին. Այդ ժամանակները նա առանձին աչքի ընկնող գիրք է ստեղծում իր քաջասքտութեամբ եւ յանդգնութեամբ,

Երբ վրայ է հասնում 94-ի արիւնալից տարին, Մհերը ստիպում է թողնել իր հայրենիքը եւ անցնել Կովկաս՝ գործելով եւ միշտ հաւատարիմ մնալով իր փայփայած Հնչակեան դրօշին։

Մինչ հայ ժողովուրդը չուարել մնացել էր Գօլիցինի հալածանքների առաջ մինչ Հնչակեանները արի զինուորներ էին ընտրում Կովկասեան Ֆօխտին կենազրաւ անելու—սիրայօժար իրեն առաջարկ է նետում անձնուրաց Մհերը ասելով „իմ անձս զուրպան է հայոց ազգին։ էս իմ բազուկ զրաւցուց է Լուսաւորիչ։ էս բազուկով կը սատկուցամ չուն Գալիցուն“։ Այսպիսով իր պատրաստակամութիւնը յայտնելով՝ խնդրում է ընկերներից՝ որ թոյլ տան իրեն միանալու միւս տէոորիստ ընկերների հետ։

Հսկիչ ընկերները տէոորիստներին յայտնում են որ «Հրէն գալիս է Գալիցին»։ Թաքստոցներից դուրս են վազում տէոորիստ հնչակեանները կանգնեցնում Գալիցնի կառքը։ Երեք հոգի աշխատում են Գալիցինի կեանքը կառքի մէջ կարճել։ սակայն իշխանութիւնը իր պաղատանքներով եւ գրկելով արգելք է դառնում սպանիչներին, ուզում են կառքից ցած բերել, դեռին գլորել. չեն յաջողում։ Ցանկարծ ձայնում են՝ «Մհե՛ր», որ ամենի ձիերի առաջ կտրած, չէր թողնում կառքը տեղից շարժուէր։

Բռնում է Մհերը և հուժկու բազուկներով գրկում ու ցած է բերում ծանրամարմին Գալիցինին, չպրտում

---

է. հէնց այսօր ես ամուսնուս կը յայտնեմ եւ կը հեռանամ նրանից.

—Բայց ինչպէս Մանիա, սպասենք կարելի է մենք խաբվում ենք. չչտապենք։

—Ոչ, չենք խաբվում. այդ իրողութիւն է եւ վճռական քայլը որչափ շուտ, այնքան լաւ։

—Եթէ այդպէս է, այսօր միասին կը յայտնենք Գալիցինին, ես էլ քեզ հետ կը լինեմ... Սակայն խաղաղ մնանք. մինչեւ ամուսնուդ յայտնելը մենք կրկին բարեկամներ ենք... Նկատեց Մարգավազովը։

. . . .

. . . .

Ինչ, ուրեմն համբուրել էլ չը պէտք է կարողանամ քեզ, խռոված բացականչեց Մանիան եւ առանց վայրկեան կորցնելու գրկեց երիտասարդի գլուխը եւ անյագօրէն համբուրել Նրա շրթունքները... Մարգավազովի գլխարկը, օձիքը կրկին վարընկան։ Հեռից ոտքի ձայն լսվեց որը վերջապէս Մանիային ստիպեց ետ քաշվել... Խեղճ Մարգավազով շտապով գլխարկը եւ պողպատը վերցրեց։ սկսեց մի քիչ կարգի բերել իրան. ոտքին ձայնը աւելի մօտեցաւ ու մէջ տեղ եկաւ ինքը Մանիայի ամուսինը, բարձրահասակ դանդաղաշարժ բայց բարի դէմքով մի ռուս պարոն. Նա նախ զտրմացած դիտեց կնոջը յետոյ բարեւեց Մարգավազովին շատ մտերմօրէն ու նստեց նրանց կողքին։

Վայրկեան չանցած Մանիան դարձաւ ամուսնուն՝ մի քիչ յուզված.

—Լաւ ժամանակին հասար. Միշտ գիտես հոգիս, իմ մէջ սեռ փոփոխութիւն պատահեց. հէնց այստեղ ես յայտնեցի Մարկոս Ցիլիպկինին որ նրան սիրում եմ նա էլ ինձ է սիրում, բանից դուրս է եկել որ ես քեզ իրական սիրով չեմ սերել. մեզ բաժանվել պէտք է այսուհետեւ ես Մարգավազովի կին եմ լինելու..

Միշտ տէքերը լայն բանալով երկուսին նայեց եւ անմիջապէս ռուսական բարի խոշոր ժպիտ երեսին պատասխանեց.

—Շատ լաւ. ինչ անենք, օրհնում եմ ձեզ. ապրեցէք իրար հետ. եւ ես կը մնամ միշտ ձեր բարեկամը։ Իսկ այսօր հարսնիքի տօնի համար գրանք մի տեղ եւ կարդին տօնենք, Երգչի էլ կառք նստեցին եւ սլացան դէպի Մուշտայիտ ու տեղաւորվեցին գետափի պարտէզներից մէկում Կէս ժամ չանցած հարսանիքի սեղանը պատրաստ էր. եւ հին փեսայ ու նոր փեսայ նոյն հարսի հետ տօնում էին երկրորդ հարսնիքը. խոստանալով միշտ լաւ անկեղծ բարեկամներ մնալ։ Ճաշից յետոյ Մարգավազովը Մանիա Գօլիցինովի կնոջ հետ, իրբեւ ամուսին գնաց նրանց բնակարանը, իսկ Գալիցինովը էլ իրբեւ Մանիայի ընկեր գնաց Մարգավազովի սենեակը... ու հայ հասարակութեան աւելցաւ մի նոր շաղկապ ռուս եւ հայ ցեղի, բարեկամութեան թէ ատելութեան այդ լաւ չը գիտեմ։

Այդ նոր ամուսնողթեան առաջին օրերում Գալիցինովը շատ չէր այցելում թազա հարս ու փեսին, մի քիչ յետոյ սկսեց յաճախել. բայց վերջը հեռացաւ Թիֆլիզից. Մարգավազովը Թիֆլիսի հայ երիտասարդութեան կոսմոպոլիտ մտքի հերոսն էր. որովհետեւ նա ամուսնացած էր այնպէս ինչպէս պէտք է ամուսնանայ ապագայ ընկերութեան մարդը, իսկ Մանիան հերոսուհի այր մարդոց հատոր. կա-

գեսին և դաշոյնով վիրաւորում ցերբերեան գանկը հայակեր Գոլիցինին մին։ Մհերը իւր միւս ընկերներով պատրաստւում էին մահացու հարուածն իջեցնել Կովկասի բորենու հաստ գլխին, յանկարծ իշխանուհին իրեն զցում է Գոլիցինի մարմնի վերան և ծածկում նրան։ Ասպետ Մհերը իր ռամկական ռուսերէնով քաղաքավարութեամբ դառնում է դէպի իշխանուհին՝ «Մադամ, վամ նէյլզիա, տերէ նիչեւ նէտ, պօստոյտէ»։ ու զում է ասել. «տիկին, դուք մի՛ խանուէք, ձեզ հետ գործ չունենք, կանգնեցէ՛ք։ «Կանգնեցէ՛ք» ասելիս՝ քաղաքավարութեամբ բարձրացնում է իշխանուհուն եւ երկու հարուած իջեցնում Գոլիցինի գագաթին։ Երբ մէկէն վրայ են հասնում կօզակները ու սկսւում է հրացանների փոխադարձ պայթիւնը։ Տէռօրիստներից միայն Մհերն է ազատւում և պատսպարան գտնում Պարսկաստանում, որտեղից «Արարատեան խմբի» 60 զինուորների հետ պատրաստւում էր երկիր մտնել 1904-ին՝ Սասուն անցնելու։ Սակայն այդ ժամանակուայ կեդրոնական Վարչութեան հրահանգով խումբը ցրւում է այս ու այն կողմ, Մհերն էլ սահիպւում է Մեալ Սալմաստ մի քանի ընկերներով։

Այն ժամանակ, երբ հայ թաթարական կոտորածի ուրուականը սկսում էր Մտեանալ Թաւրիզին և երբ Թաւրիզը սարսափի ու իրարանցման մէջ էր եւ բոպէ առ բոպէ սպասում էր յարձակման,—Մհերը այդ օրերը Թաւրիզ եկաւ։ Բայց բարերախտաբար ամէն ինչ անցնում է խաղաղ և Մհերը աւելորդ համարելով մնալ Թաւրիզում ու ծանրանալ կուսակցութեան վրայ՝ գնում է խճուղու ճանապարհին աշխատելու։ Ձմեռը վրայ է հասնում։ Ընդհատւում են ճանապարհների աշխատանքները։ Մհերը դառնում է Թաւրիզ եւ էլի չկամենալով բեռ դառնալ կուսակցութեան վրայ, բաց է անում մի համեստ ճաշարան և պրանով հայթայթում է իր ապրուստը։ Թէ ապրիլ 27ին Մհերը ինչպէս զոհ գնաց դաշնակցական անգիտակիցներին,—այդ դրաման ծանօթ է։ Այսքանը ասենք որ Թաւրիզի հայ թուրք, յոյն, ռուս, վրացի հասարակութիւնները դառնագին ողբացին ընկնողին։ Ցիշեալ ազգերից խուռն բազմութիւն արտասուալից աչքերով մասնակցեց զոհի յուղարկաւորութեանը։ Դին հողին յանձնելուց յետոյ դեռ երկար, չա՛տ երկար Թաւրիզցի կանայք և օրիորդներ ընկած թարմ չիրմին վրայ՝ ողբում էին «դարիր, անուն, անտէր, անէր, անմէր թաղուող ազբէր Մհէրին»։

Մհերը թողնում է 14 տարեկան մի տղայ եւ մի փոքրիկ աղջիկ։

Հերոսի յիշատակը ոսկի տառերով արձանագրուած կը մնայ ո՛չ միայն հայ, այլ ամբողջ Կովկասի ազատագրութեան պատմութեան մէջ։

Դարերի անթառամ պսակներ իր պայծառ յիշատակին։ (*)

«ՀՆՉԱԿ»

(*) Ծ. Խ — Եթէ Մհերի մասին գրվածներն ճիշտ են. Մհերի փոխարէն եթէ դաշնակցութեան բիւրոնեի և արտասահմանեան բոլոր կոմիտէների անդամները մեռնէին հայ ազգը այդքան ցաւ չը պիտի զգար։

---

## ԲԿՑՈՏՐՈՒԹԻՒՆ

(Պետրոս Սէրէմճեանի գրքի մասին)

Որանից գրեթէ մի տարի առաջ մենք յայտարարէցինք որ Պետրոս Սէրէմճեանի գրքի համար հաւաքված գումարը չէ համապատասխանում անհրաժեշտ եղած ծախքերին և խնդրեցինք թէ ով որ համբերութիւն չունի կարող է իր ուղարկած գումարը ետ պահանջել։ Մենք ուզում է ինք գումարը ետ դարձնելով միանգամից ազատվել այդ խնդրից, որովհետև մեր բարի նպատակը ցեխոտվելով նիւթ էր դառնում մեր հակառակորդների ձեռքում։ Այնուամենայնիւ ոչ ոք դրամը ետ չը պահանջեց։ Եւրոպա գնացածս մի չոցին ես համաձայնվեցի Վիէննայի Մխիթարեանների հետ, իմ գրիչով, ուրախութեամբ, որովհետև հայր Մխիթարեանները պահանջում էին 1400 ֆրանկ տալ գիրքը լոյս հանելու համար, դժբախտաբար հայր Մխիթարեանները Պետոյի գրվածքները կարդալուց յետոյ, գրաւոր կերպով ինձ յայտնեցին որ գրքի բովանդակութիւնը իրենց ազգելք է հանդիսանում այդ գիրքը հրատարակել։

Վերադարձիցս՝ յետոյ բանակցութեան մտայ Տիար Օննիկ Բարսեղեանի հետ, որը նոր տպագրիչ մեքենա է պատրիրել Եւրոպայից ու մինչեւ այդ մեքենան գալը իմ սեփական, «Ցաւ տարի Դաշնակցութեան մէջ» բրոշիւրս պէտք է տպագրէ իր հին մեքենայով, ու հոկտեմբերի մէջ պէտք է սկսի տպագրել Պետոյի գիրքը նոր մեքենայով։ Այս տեղ աւելորդ չգամ համարում հայորդել որ նոյն հրատարակութեան համար Վիէննայում մի հայ երիտասարդ նիրել է տաս քրօն, իսկ մի ուրիշ պարոն էլ Սոֆիայում, խոստացել է մի որոշ գումար նիրել։ Այնպէս որ այժմ տրամադրելի գումարը բաւում է այդ գիրքը, Վարնայում մաքուր ապագրութեամբ մէջտեղ հանելու, ու նրա տպագրութիւնը կսկսվի հոկտեմբերից ու գրա միակ պատճառը այն է, որ հին մեքենայով չէր կարելի ցանկալի մաքրութեամբ տպագրել գիրքը։

---

Յառաջիկայ Սեպտեմբերին Կրսկի Ամիրխանեանց երկսեռ վարժարանին 2րդ. ամբեշրջանը։ Ընդունելութեան եւայլն պայմանական քննութիւններ Կրսկին Օգոստոս 20ին։

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկար թուրք սահմանագրլխին վրայ թուրք և պուլկար զօրքերը էնդհարում ունեցեր են. թուրքերէն բաւական սպանուածներ կան. թուրք կառավարութիւնը զօրք կը հաւաքէ դէպքը տեղի ունեցած սահմանին վրայ ինչպէս և Պուլկարիան. երկու կողմէն ալ քննիչ պաշտօնեաներ գացեր են դէպքի վայրը։

— Ռուս կառավարութիւնը պաշտօնապէս հրամայած է Սոֆիայի իր ներկայացուցիչ Շչեկլովին պուլկար արտաքին գործոց նախարարին հետ յարաբերութիւնները խզել։ Այդ առթիւ ռուսոֆիլ մամուլը մեծ իրարանցումի մէջ է։ Ռուս և եւրոպական մամուլը այդ քայլը կը վերագրէ Պուլկարիոյ մանուանդ Ֆէրտինանա Իշխանի Անգլիոյ հետ շատ բարեկամանալուն։

— Կառավարութիւնը համազգային համագումարին պատգամաւորներուն խոստացած է պէտք եղածը ընել տրուած պահանջներուն գոհացում տալու համար։

---

## ՌՈՒՍԻԱ

Ստոլիպինի, նախարարապետ, կեանքին դէմ զարհուրելի փորձ մը տեղի ունեցեր է։

Դաւադիրները իր դղեակը գացեր են և քանի մը ռումբներ նետեր են։ Սրահները քանդվեր են, Ստոլիպինի 14 տարեկան սղջիկը ծանրապէս վիրաւորուեր է. սպաններ են 28 մարդ, կան և բազմաթիւ վիրաւորեալներ, ոլոնք ունկնդրութեան եկած էին նախարարապետին մօտ։ Համոզուած են որ սպաննուածներու և վիրաւորեալներուն մէջ կը գտնուին և իրենք դաւադիրները։

Ռուս յեղափոխականներէն պէտք է օրինակ առնէին Սուլթանի դաւադիրները համոզուած ըլլալով որ աջանց կեանքը անմիջական վտանգի ենթարկելու այդպիսի մեծ դաւերը գոնէ մասամբ մը չեն յաջողիր։ (Հ. Խ.)

---

## ՍՐԱՀ ՍԱԷՏԻՆԷՆԻԷ

Վառնայի հայ երիտասարդական «ՄԱՍԻՍ» խումբը, յառաջիկայ Օգոստ. 19ին, շաբաթ գիշեր մեծ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ ի նպաստ Վասպուրականի կարօտեալց, առաջին անգամ ըլլալով։

— ԱՐԾԱԿ Բ. —

Ողբերգութիւն 5 արարուած անմահն Պէշիքթաշլեանի հեղինակութիւններէն։ Ողբերգութենէն վերջ խիստ ծիծաղաշարժ դաւեշտ մը տեղի պիտի ունենայ հայերէն լեզուաւ։

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
«ԱՐԱՔՍ» ՆՈՒԱԳ ԽՈՒՄԲԻ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
„ՄԱՍԻՍ" թատերախմբի

---

## ԳԵՂՈՒՆԻ

ԻՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՍՐԿԱԾԵԱԼՆԵՐՈՒ

Գեղունի իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական եւ գրական բովանդակութեամբ հրատարակուած է Կովկասահայ մեծ գանգուածը փութկոտօրէն սփոփեց արկածեալ թրքահայը։ հիմա ինքն է լացողը, ինքն է վիրաւորվածը, եւ ինքն է սովի եւ կրակի մատնուածը այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կուտայ ԲԱՐԵԳՈՐԾՈ ԹԻՒՆԸ. ձեռնպահ չի մնար եւ Գեղունին. որ Կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բաժին մուտնի։ Ս Ղազար 1000 օրինակ այս նոր Գեղունէն (1906) յղեց Թիֆլիզի նպաստ Կովկասահայ արկածեալներու յանձնաժողովին. ընդանուր հայութեան այն ամէն անհատ ու տառապեալներու գանձանակին մէջ հաճոյս լումայ մը 10 ֆր. նետելու կարողութիւնն ունի, ցանկալի է որ դիմէ այդ յանձնաժողովին, ուսկից փոխարէն իր բարեգործութեան, կը ստանայ նոր հրատարակուած Գեղունին. որուն կատարելութեանը համար թերթին մի եւ նոյն վարչութիւնը ամէն ճիգ ու ջանք թափած է եւ աւելի եռանդով։

Գեղունի բաժնեգինն է 10 ֆրանկ։

Մեր հասցէն է՝ ԷՄԲՐԻՄԸՐԻ. ԱՐՄԷՆԻԷՆ ՍԹ. ԼՈՒԶԱՐ
ՎԸՆԻՍ (Իթալիա)

---

## ԱՐԵՒԵԼՔ

Լոյս տեսաւ մեր տպարանէն Հայաստանի եւ գրացի երկիրներու մեծադիր (մեդր 1 1.25) քարտեզը արեւելք վերնագրի տակ։ Այս քարտէզը յատկապէս պատրաստուած է ազգային վարժարաններու եւ վաճառականական դասընթացներու համար։ Մասնաւոր խնամք տարուած է տպագրութեան մաքրութեան եւ տառերու յստակութեան։ Եօթը զանազան գոյներով կ'որոշուին բոլոր դրացի տէրութեանց երկիրները։ Քարտէզին մէկ անկիւնը մայ նաեւ Կ. Պոլսի մասնաւոր քարտէզը. իսկ հարաւակողմը զանազան սիւնակաց մէջ գրուած են օգտակար վիճակագրական տեղեկութիւններ։

Դինն է ֆռանկ 5—ոսկի 2—տոլար 1։

Դիմել մեր սովորական հասցէին.
Էմբրիմբրի Արմէնիէն Սթ Լուզար
Վէնիս (Իթալիա)

---

Печатница на П. Глушковъ С Вар.

---

բելի հայ օրիորդներին, որոնք չեն կարողանում հանդուրժել որ Մանիան մի քանի ամսվան մէջ երկու ամուսին գտնել. ամն էլ տարբեր ցեղերի եւ տարբեր արտաքինի երիտասարդներ։

ՎԱՐԴՕ

(Շարունակելի)